ՕԳՏԱԿԱՐ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ստորև բերված ծառայությունները համապատասխան հաստատությունների և կազմակերպությունների կողմից ապաստան հայցողներին և քաղաքացիություն չունեցող անձանց տրամադրվում են անվճար:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայություն

Միգրացիոն ծառայությունը քննում է ապաստան ստանալու մասին դիմումները և որոշումներ է կայացնում Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին դիմումների վերաբերյալ:

Հեռ. +374 60 27 50 25, +374 60 27 50 34
Հասցե՝ 0037, Երևան, Կարապետ Ուլնեցու փող. 31
Էլեկտրոնային փոստ՝ smsasylum@gmail.com
Կայքէջ՝ www.smsmta.am

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (օմբուդսմեն)

Պաշտպանը հանդես է գալիս որպես անկախ պետական պաշտոնատար անձ, ով հետևում է պետության, տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների բնագավառում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը: Պաշտպանը նպաստում է նաև խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը:

Հեռ. +374 10 53 76 51 Թեժ գիծ՝ 116
Հասցե՝ 0002, Երևան, Պուշկինի փող. 56ա
Էլեկտրոնային փոստ՝ ombuds@ombuds.am
Կայքէջ՝ www.ombuds.am

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ

Հանրային պաշտպանի գրասենյակը տրամադրում է անվճար իրավաբանական օգնություն, այդ թվում՝ ապաստան հայցողներին, փախստականներին, Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց, մարդկանց թրաֆիքինգի (Մարդկանց թրաֆիքինգի հարցերով հանձնաժողովի կողմից որպես զոհ ճանաչվելու պայմանով) և խոշտանգման զոհերին, ինչպես նաև այն անձանց, ովքեր հնարավորություն չունեն դատական և այլ հանրային մարմիններում իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար օգտվել իրավաբանական ծառայություններից:

Հեռ. +374 10 60 07 14
Հասցե՝ 0010, Երևան, Զաքիյան փող. 7-2, 2-րդ հարկ
Էլեկտրոնային փոստ՝ pashtpan@advocates.am
Կայքէջ՝ www.advocates.am

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն

Քրեակատարողական հիմնարկում գտնվող ապաստան հայցողները կարող են դիմել քրեակատարողական հիմնարկի վարչակազմին՝ խնդրելով իրենց դիմումն ուղղել Միգրացիոն ծառայություն: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմը պարտավոր է ապաստան հայցողին հայտնել նրանց օրինական իրավունքներն ու պարտավորությունները: Հարցազրույցը և ապաստան հայցողների կողմից ներկայացված բոլոր տեղեկությունները գրանցվում և փոխանցվում են Միգրացիոն ծառայություն:

Թեժ գիծ՝ +374 10 44 22 73
Հասցե՝ 0061, Երևան, Արշակունյաց պողոտա 63
Կայքէջ՝ www.ced.am

Հայաստանի Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) ներկայացուցչություն

ՄԱԿ ՓԳՀ-ն մշտադիտարկում է Միգրացիոն ծառայության կողմից ապաստան ստանալու մասին դիմումների քննությունը և անհրաժեշտ աջակցություն է մատուցում՝ ապահովելով ապաստանի տրամադրման որակյալ ընթացակարգեր: ՄԱԿ ՓԳՀ-ն լրացնում է ապաստան հայցողների, փախստականների և տեղահանված անձանց տարրական կարիքների բավարարման ուղղությամբ ձեռնարկվող կառավարության ջանքերը և իր գործընկերների հետ համատեղ ծրագրերի միջոցով նպաստում առողջապահության, կրթության և զբաղվածության բնագավառներում աջակցության հետ կապված բացերի լրացմանը:

Հեռ. +374 91 41 53 87; +374 10 54 59 37 (ներքին՝ 117)
Հասցե՝ 0010, Պետրոս Ադամյան փող. 14
Էլեկտրոնային փոստ՝ armyeprt@unhcr.org
Կայքէջ՝ www.un.am/hy/agency/UNHCR
Ֆեյսբուկ՝ https://www.facebook.com/UNHCRArmenia/

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)

ՄՄԿ-ն նպաստում է միգրացիայի մարդասիրական և կանոնավոր կառավարմանը, ինչպես նաև միգրանտների մարդու իրավունքների արդյունավետ պահպանմանը և անհրաժեշտության դեպքում համագործակցում համապատասխան այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ դյուրացնելով փախստականների, տեղահանված անձանց, միգրանտների և միջազգային միգրացիոն ծառայությունների կարիք ունեցող այլ անձանց կամավոր վերադարձը և վերաինտեգրումը:

Հեռ. +374 10 58 56 92
Հասցե՝ 0010, Պետրոս Ադամյան փող. 14
Էլեկտրոնային փոստ՝ IOMArmenia@iom.int
Կայքէջ՝ www.iom.int/countries/armenia

UNHCR
The UN Refugee Agency

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Քրեակատարողական հիմնարկներում ապաստան հայցողների համար

Երևան 2018

ԻՆՉՊԵՍ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ (ՔԿՀ) ԴԻՄԵԼ ԱՊԱՍՏԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանում ապաստան հայցելու իրավունք

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
«Յուրաքանչյուր ոք հետապնդումից այլ երկրներում ապաստան փնտրելու և այդ ապաստանից օգտվելու իրավունք ունի» (14-րդ հոդվածի 1-ին մաս)

ՀՀ Սահմանադրություն
«Քաղաքական հետապնդման ենթարկվող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան հայցելու իրավունք» (54-րդ հոդված)

«Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի» (55-րդ հոդվածի 1-ին մաս)

Ո՞Վ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ

- Օտարերկրացին, ով գտնվում է իր քաղաքացիության կամ մշտական բնակության երկրից դուրս և դիմում է Հայաստանում ապաստան ստանալու համար, հանդես է գալիս որպես ապաստան հայցող՝ նախքան ապաստան ստանալու մասին նրա դիմումի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու պահը:
- Դուք կարող եք դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն, եթե.
  - ունեք ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղ կամ
  - ձեր կյանքը, անվտանգությունը կամ ազատությունը վտանգված են համընդհանուր բնույթի բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգի լուրջ խախտումների այլ հանգամանքների հետևանքով:

ՈՐՊԵՍ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ՝ ԴՈՒՔ

- չեք ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինի մուտք գործելու համար;
- չեք արտաքսվում կամ հանձնվում օտարերկրյա պետությանը, եթե կա իրական սպառնալիք, որ Դուք կարող եք այդ երկրում ենթարկվել մահապատժի, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի;
- իրավունք ունեք բնակվել ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում՝ այնտեղ սենյակների առկայության դեպքում;
- իրավունք ունեք անվճար օգտվել գրավոր և բանավոր թարգմանության ծառայություններից;
- իրավունք ունեք ստանալ անվճար իրավաբանական օգնություն, ինչի համար պետք է դիմեք Հանրային պաշտպանի գրասենյակ (տես կոնտակտային տվյալները);
- իրավունք ունեք դիմել Մարդու իրավունքների պաշտպանին, եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են պետության, տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց, ինչպես նաև հանրային ծառայությունների բնագավառում գործող կազմակերպությունների կողմից;
- իրավունք ունեք դիմել Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի Ներկայացուցչություն, ինչպես նաև Միգրացիայի միջազգային կազմակերպություն:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դուք պետք է հայտնեք ապաստան հայցելու Ձեր մտադրության մասին ՔԿՀ-ի վարչակազմին, որն էլ այնուհետև կուղղի Ձեր ապաստանի դիմումը Միգրացիոն ծառայություն (ՄԾ):
- Ապաստան ստանալու մասին դիմումը կարելի է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածք ապօրինաբար (առանց պատշաճ ճամփորդական փաստաթղթերի) մուտք գործելու դեպքում: Նման իրավիճակներում Դուք պետք է դիմեք ՔԿՀ-ի վարչակազմին և անհապաղ տեղեկացնեք Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցելու Ձեր մտադրության մասին, եթե արդեն չեք դիմել պետական այլ մարմիններին (սահմանապահներին, ոստիկանություն, Միգրացիոն ծառայություն):
- Դուք կարող եք ՔԿՀ-ի վարչակազմի միջոցով դիմում ուղղել ՀՀ-ում փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակ՝ խնդրելով Ձեզ տրամադրել անվճար իրավաբանական օգնություն:
- Դուք պետք է մասնակցեք իրավասու պետական մարմինների, այդ թվում՝ ՔԿՀ-ի վարչակազմի կողմից անցկացվելիք հարցազրույցին:
- ՄԾ-ն ապաստան ստանալու մասին դիմումը քննարկում է այն գրանցելուց հետո՝ եռամսյա ժամկետում և կարող է երկարաձգել այդ ժամկետը մինչև երեք ամիս ժամանակով, բացառությամբ օրենքով նախատեսված արագացված ընթացակարգերի կիրառման դեպքի:
- Հարցազրույցի ժամանակ Ձեր կողմից ներկայացվող տեղեկությունները ոչ մի դեպքում չեն հաղորդվում Ձեր երկրի իշխանություններին կամ որևէ երրորդ կողմին:
- Դուք պետք է հետևեք ՀՀ օրենսդրությանը: